

# ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

### ՕՐԵՆՔԸ

#### ՏԵՍԱԼՍՈՂԱԿԱՆ ՄԵԴԻԱՅԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**Հոդված 1.** Հայաստանի Հանրապետության 2020 թվականի հուլիսի 16-ի Տեսալսողական մեդիայի մասին օրենքի (այսուհետ՝ Օրենք) 3-րդ հոդվածի առաջին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 31-րդ կետով.

31)

#### Սինթետիկ

**բովանդակություն՝** ցանկացած տեսակի տեսալսողական, ձայնային, կամ այլ տեղեկատվական նյութ, որն ամբողջությամբ կամ մասնակիորեն ստեղծվել, գեներացվել, ձևափոխվել կամ վերարտադրվել է արհեստական բանականության համակարգերի, ալգորիթմային գեներատիվ տեխնոլոգիաների կամ ավտոմատացված ծրագրային միջոցների կիրառմամբ, ինչպես նաև այն նյութը, որը թվային մշակումների արդյունքում ձևափոխվել է այնպես, որ կարող է անձի մոտ ստեղծել իրականության հետ անհամապատասխան ընկալում դրա ծագման, իսկության կամ ներկայացված անձի խոսքի, պատկերի կամ գործողությունների վերաբերյալ:

**Հոդված 2.** Օրենքը լրացնել հետևյալ բովանդակությամբ 9.1 հոդվածով?

#### Հոդված 9.1 Սինթետիկ բովանդակության պարտադիր մակնշումը

1. Տեսալսողական մեդիաձառայություն մատուցողները պարտավոր են ապահովել, որ սինթետիկ բովանդակությունն ունենա հստակ, լսելի կամ

տեսանելի և ընթերցելի մակնշում, որը պարունակում է «Գեներացված Է ԱԲ-ի կողմից» կամ «Ստեղծված Է ԱԲ-ի կողմից» նշումը:

2. Մակնշումը պետք է իրականացվի հետևյալ եղանակներով՝

- 1) Տեսալսողական հաղորդման դեպքում ցուցադրվի տեսանյութի ամբողջ ընթացքում, ինչպես նաև արտացոլվի նկարագրության դաշտում,
- 2) Լսողական հաղորդման, ինչպես նաև ձայնային բովանդակությամբ այլ նյութերի դեպքում՝ ներառվի երկու անգամ՝ լսողական հաղորդման սկզբում և վերջում, ինչպես նաև նկարագրության դաշտում,
- 3) պատկերների դեպքում՝ արտացոլվի պատկերի վրա, ինչպես նաև, ներառվի պատկերի նկարագրության դաշտում:

3. Այն դեպքում, երբ հաղորդումն ամբողջությամբ սինթետիկ բովանդակություն չի հանդիսանում, մակնշումը կատարվում է միայն հաղորդման այն հատվածում, որը պարունակում է սինթետիկ բովանդակություն:

4. Մակնշման պարտականությունը չի տարածվում այն դեպքերի վրա, երբ բովանդակությունը ֆանտաստիկ, գեղարվեստական, հումորային կամ մշակութային բնույթ ունի, բացառությամբ այն դեպքերի, երբ այն կարող է օգտագործվել ապատեղեկատվության նպատակով:

**Հոդված 3.** Օրենքի 57-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 30.1 հոդվածով՝

**30.1** Սույն օրենքի 9<sup>1</sup> հոդվածի պահանջները խախտելը՝ առաջացնում է տուգանքի նշանակում՝

Հասույթի 0.04 տոկոսի, բայց ոչ պակաս, քան սահմանված նվազագույն աշխատավարձի երեքհարյուրապատիկի չափով:

**Հոդված 2.** Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը: